***

Ամանորի եւ Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առիթով Վեհափառ Հայրապետին շնորհավորականներ են հղվել Հայոց Եկեղեցու թեմական առաջնորդներից եւ թեմական խորհուրդներից ու համայնքներից, քույր եկեղեցիների հոգեւոր հայրերից՝ կարդինալներից, միտրոպոլիտներից եւ մյուս առաջնորդներից ու հոգեւոր սպասավորներից, էկումենիկ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

Հայաստանի Հանրապետության նախարարներից, մարզպետներից, քաղաքապետերից, ակադեմիական եւ համալսարանական հաստատություններից, գիտության, մշակույթի ու տարբեր բնագավառների բազմաթիվ գործիչներից եւ առանձին անհատներից, Հայաստանում գործող քաղաքական կուսակցություններից, հասարակական կազմակերպություններից եւ ստեղծագործական միություններից, ինչպես նաեւ միջազգային տարբեր կազմակերպությունների՝ Հայաստանյան գրասենյակներից, սփյուռքահայ մի շարք կառույցներից եւ հաստատություններից:

Շնորհավորականներ են ուղարկել Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական հաստատությունների ներկայացուցիչները, արտասահմանյան երկրներում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպանները, Սփյուռքում գործող հասարակական եւ համայնքային կազմակերպությունները:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Հունվարի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի վարչապետ Ռիձինա Իվանիշվիլիի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ խոսեց երկու երկրների հարաբերությունների ներկա վիճակի մասին՝ վստահություն հայտնելով, որ Վրաստանի վարչապետի այցը Հայաստան նոր խթան կհանդիսանա միջպետական համագործակցության զարգացման համար:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը մասնավորապես անդրադարձավ Վրաստանում հայկական պատմական սրբավայրերի պատշաճ պահպանման ու վերականգնման, ինչպես նաեւ հայ համայնքի հոգեւոր կարիքների բավարարման համար անհրաժեշտ մի շարք հայկական եկեղեցիների՝ Վիրահայոց թեմին վերադարձնելու խնդրին: Ամենայն Հայոց Հայրապետը հույս հայտնեց, որ Վրաց պետության կողմից անհրաժեշտը կձեռնարկվի հիշյալ խնդիրներն ըստ պատշաճի լուծելու ուղղությամբ:

Վիրահայ համայնքի անունից Նորին Սրբությունը խնդրանքով դիմեց պրն. Իվա-

Բիձինա Իվանիշվիլին Մայր Աթոռում

նիշվիլիին, որպեսզի Վրաստանի հայկական դպրոցներում դասավանդվի «Հայ ժողովրդի պատմություն» առարկան: Վեհափառ Հայրապետը նաեւ միջնորդություն ներկայացրեց քաղբանտարկյալ Վահագն Չախալյանի ազատ արձակման համար:

Իր հերթին, Վրաստանի վարչապետը, ուրախություն հայտնելով Մայր Աթոռ այցելության առիթով, խոսեց հայ-վրացական դարավոր բարեկամության մասին՝ ընդգծելով նաեւ, որ մեծ հարգանք է տածում հայ ժողովրդի նկատմամբ: Ապա վարչապետն անդրադարձավ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձրացրած խնդիրներին՝ տեղեկացնելով, որ անձնապես հանձն է առնում եկեղեցիների նորոգությունը եւ անհրաժեշտ բոլոր քայլերն անմիջապես կձեռնարկվեն հայկական եկեղեցիների պահպանության ուղղությամբ: Տիար Իվանիշվիլին նաեւ հանձնարարական տվեց «Հայ ժողովրդի պատմություն» առարկայի դասավանդումը հայկական դպրոցներում կազմակերպելու համար, իսկ Վ. Չախալյանի առնչությամբ հայտնեց, որ խնդիրը քննարկման փուլում է:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան արքեպ. Հովհաննիսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը եւ Վիրահայոց թեմի Ջավախքի փոխառաջնորդ Տ. Բարկեն աբեղա Սալբիյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հունվարի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի: Պատվիրակության կազմում էին Ռուսաստանի Դաշնության, Բելոռուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի մշակույթի, սպորտի, կրթության եւ գիտության անվանի գործիչներ:

Վեհափառ Հայրապետը ողջունեց պատվիրակության այցը Հայաստան եւ Մայր Աթոռ՝ վստահություն հայտնելով, որ նրանց ներկայությունը մեծ խանդավառություն կպարգեւի հայ ժողովրդի զավակներին: Ուրախություն հայտնելով «Գյումրին՝ 2013 թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» հայտարարելու որոշման եւ ծրագրվող միջոցառումների կապակցությամբ՝ Նորին Սրբությունը նշեց, որ այն վստահաբար պիտի նպաստի ինչպես մշակութային հարուստ ժառանգություն եւ ավանդներ ունեցող Գյումրի քաղաքի մշակութային կյանքի առավել աշխուժացմանն ու զարգացմանը, այնպես էլ միջպետական մշակութային համագործակցության ամրապնդմանն ու զորացմանը: Ամենայն